

ԱՆԱՀԻՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ծնվել է 1948 թվականի հունվարի 10-ին ՀՀ քաղաք Վերին Թալինում:

1965 թ. ավարտել է Վերին Թալինի Մ.Գորկու անվան միջնակարգ դպրոցը՝ ոսկե մեդալով, 1969թ. ԵՊՀ-ի տնտեսագիտության ֆակուլտետը, 1975թ. ՀԽՍՀ Պետսպլանի տնտեսագիտության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտի առկա ուսուցմամբ ասպիրանտուրան:

1987 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

2004 թ. շնորհվել է դոցենտի, 2017թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում:

1969թ. սեպտեմբերից մինչև 1994թ. սեպտեմբերն աշխատել է ՀԽՍՀ Պետսպլանի տնտեսագիտության և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտում, պաշտոնավարելով կրտսեր գիտատեխնիկական աշխատողից մինչև գիտական խմբի ղեկավարի պաշտոններում:

1994թ. սեպտեմբերից մինչև 2017թ. սեպտեմբերը զբաղեցրել է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դոցենտի, իսկ 2017թ.-ի սեպտեմբերից մինչ այժմ՝ պրոֆեսորի պաշտոնները:

Գիտական հետազոտությունները վերաբերվում են աշխատանքի տնտեսագիտության հիմնահարցերին:

Հեղինակ է 41 գիտական աշխատանքների, որոնցից երկու տասնյակը գիտական հոդվածներ են, 2-ը՝ մենագրություններ, 12-ը՝ գիտահետազոտական աշխատանքներ, հեղինակ է մի շարք բուհական դասագրքերի և ուսումնական ձեռնարկների (1. Մարդկային զարգացման հիմունքներ, դասագիրք մագիստրատուրայի համար, հեղինակային խումբ, պրոֆ. Հ.Սարգսյանի գլխավոր խմբագրությամբ, Երևան, Նոյան Տապան հրատարակչություն, 2004: 2. Կառավարման և գործարարության ընտրովի հարցեր, ԵՊՀ հրատարակչություն, Ս.Ղանթարջյան, Ա.Համբարձումյան. Ա Սարգսյան, Երևան, 2005: 3. Աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորում, Ա.Համբարձումյան, Աստղիկ գրատուն, Երևան, 2014: 4.Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա, Ա.Համբարձումյան, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016: 5. ՀՀ աշխատաշուկան. իրավիճակը և միտումները, Ա.Համբարձումյան, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016):

Եղել է «ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» փորձագետ:

Ներկայումս հանդիսանում է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի գիտքարտուղարը:

Ա.Համբարձումյանի ղեկավարությամբ պաշտպանվել են 7 թեկնածուական ատենախոսություններ, որոնցից երկուսի կատարողները արտասահմանի քաղաքացիներ են եղել: Ներկայումս մեկ հայցորդի գիտական ղեկավար է:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

#	Աշխատանքի անվանումը	Բնույթը (տպ., ձեռ.)	Անվանումը, հրատարակչությունը հրատարակության վայրը, տարեթիվը, համարը	Ծավալը (էջ, տպ. մամուլ)	Համահեղինակները
	Ուսումնա-մեթոդական աշխատանքներ				
1.	Աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորում	տպագիր	Ղասախոսություններ, Աստղիկ գրատուն, Երևան, 2014	108 էջ	---
2.	Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա	տպագիր	ԵՊՀ հրատարակչություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2016	275 էջ	---
3.	Կառավարման և գործարարության ընտրովի հարցեր	տպագիր	ԵՊՀ հրատարակչություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005,	149 էջ էջ1-42	Ս.Ղանթարջյան Ա.Սարգսյան
	Մենագրություն				
4.	ՀՀ աշխատաշուկան. իրավիճակը և միտումները	տպագիր	ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016	175 տպ.էջ	---
	Հոդվածներ				
5.	Limitations and Problems of Polyethylene Products Export in National Iranian Petrochemical Company	տպագիր	Journal of Bssic and Applied Scientific Research 2(3), 2464-2466 2012, TextRoad Pablication ISSN 2090-4304	3 տպ. էջ	Hossein Esmaeili Shahmirzadi
6.	ՀՀ-ում մարդկային կապիտալի իրացման ասպեկտները	տպագիր	«ՀՀ աշխատանքային օրենսդրությունը որպես գենդերային հավասարությանը նպաստող արդյունա-նավետ մեխանիզմ» համաժողովի նյութեր, Երևան, ԱՍՀԱԻ, 2009	6 տպ.էջ էջ 31-36	---
7	ՀՀ զբաղվածության դինամիկան անկախության 20 տարիներին	տպագիր	Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ, գիտական աշխատանքների ժողովածու, գիրք 4 «ՕՐ-ՂԱՐ» հրատարակչություն, Երևան, 2012	12 տպ.էջ էջ 18-29	---

#	Աշխատանքի անվանումը	Բնույթը (տպ., ձեռ.)	Անվանումը, հրատարակչությունը հրատարակության վայրը, տարեթիվը, համարը	Ծավալը (էջ, տպ. մամուլ)	Համա- հեղինակները
8.	Ով է ձեռնարկատերը և ինչ է ձեռնարկատիրությունը: Ձեռնարկատիրության տեսության վեց դպրոցները	տպագիր	ՀՀ կայուն զարգացման հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու-4: «Անանիա Շիրակացի» հրատարակչություն, Երևան 2013	8 տպ. էջ էջ 39-47	Թ.Գ. Հովհաննիսյան
9.	Աշխատանքի տնտեսագիտության որոշ հասկացությունների հստակեցման փորձ	տպագիր	Բանբեր Երևանի համալսարանի, Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, 141.5, Երևան 2013	7 տպ. էջ, էջ 24-30	---
10.	Զբաղվածությունը, գործազրկությունը և մարդկային կապիտալի կորուստները	տպագիր	ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի տարեգիրք, Երևան, 2013	14 տպ. էջ 354-367	Գ.Ա. Ղարիբյան
11.	ՀՀ աշխատանքային ռեսուրսների ձևավորումը և բաշխումը	տպագիր	Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ, Պարբերական գիտական ժողովածու, Գիրք 8, «ՕՐ-ԴԱՐ» հրատարակչություն, Երևան, 2015	14 տպ. էջ էջ 31-45	---
12.	Զբաղվածությունը ՀՀ աշխատաշուկայում	տպագիր	«Ֆինանսներ և էկոնոմիկա» ամսագիր, հ. 11-12, Երևան, 2015	7 տպ. էջ, էջ 20-26	---

Գիտա-հետազոտական աշխատանքներ

13.	ՀՀ աշխատաշուկայի վերլուծություն	տպագիր	«Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2010	199 էջ	Գիտահետազոտական խումբ Գ. Ղարիբյանի ղեկավարությամբ
14.	Կապիտալի նախասկզբնական կուտակման, հարստության և եկամուտների բեռնացման առանձնահատկությունները և կարգավորման հիմնախնդիրները ՀՀ անցումային տնտեսությունում	տպագիր	ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011	82 էջ	Գիտահետազոտական խումբ Գ. Ղարիբյանի ղեկավարությամբ